

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԺՈՂՄԿՈՍԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ ՕՐԴՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ
ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 90-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ
ՆՎԻՐՎԱԾ ՄԻԶԱՋԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ**

(Երևան, 20 ապրիլի 2005 թ.)

Մեծարքու Նախագահ Հայաստանի Հանրապետության,

Համաժողովի պարվածան մասնակիցներ և հյուրեր.

Ողջունում ենք Ձեզ Հայոց ցեղասպանության 90-ամյա տարեկիցին նվիրված միջազգային այս համաժողովի ամիթով և բերում օրինություն համայն հայոց հոգևոր կենդրուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից:

Մեր ժողովրդի համար այսօր մեծ մխիթարություն է, որ տասնամյակներ անց միջազգային հանրության ուշադրության կենդրունում է 20-րդ դարասկզբին Օսմանյան թուրքիայում իրականացված Հայկական ցեղասպանությունը, որը բազմաթիվ փորձություններ դեսած մեր ժողովրդի պարմության ամենաողբերգական էջն է:

Քաղաքակրթության առաջնորդացի, լուսավորության դարում մեր ժողովուրդը հույս ուներ գրինել անձի ապահովություն, մարդկային իրավունքի պաշտպանություն և խաղաղ ու սպիտակործ կյանքի պայմաններ, բայց բնաշնչվեց թուրքիայի տարածքում գրինվոր իր պարմական Հայրենիքի մեծագույն հարվածի վրա և թուրքական կայսրության հայշաբ բնակավայրերում: Կազմակերպված կողորածներն ու տարագրությունը վերածվեցին մահվան նախճիրի: Ինչ չէր հասցնում սուրբ, ավարտում էին սովոն ու համաճարակները: Փաստական վկայությունների պակաս չեն զգում այս իրադարձությունների ուսումնաշիրությունները: Այսօր մի շարք պետությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումն ու դադարակրումը, իբրև մարդկության դեմ գործված մեծագույն ոճիր, վսփահություն է ներշնչում Մեզ, որ այս պիտի գրինի համենդիանոր ճանաչում ու արդար գնահատական:

Նայ ժողովրդի համար Ցեղասպանության մեծագույն աղեքով սկսված 20-րդ դարը մարդկության պարմության մեջ մնաց իբրև երկու համաշխարհային պարերազմների դար: Նույն այն միաժամկետ պարագաներուն որով կազմակերպվեցին սոսկալի, վայրագ ջարդերը հայերի, ծնունդ առան համակենդրունացման ճամբարներն ու զազախցիկները: Նոր դար է սկսվում և պիտի սկսվի նոր միաժամկետ՝ բռնությունն ու ոճիրը մերժող և մարդասիրական արժեքները հասպարող: Դար, որի մեջ, ինչպես սաղմոսերգուն է ցանկանալով ցանկանում՝ ողորմությունն ու ճշմարդությունը հանդիպեն և արդարությունն ու խաղաղությունը համբուրվեն: Մենք՝ մարդիկ, պիտի կերպենք այդ դարը: Պարմությունը վկայում է, որ սվերներից սովորաբար ավելի հեշտ վերականգնվում են բաղաքները, բարեփոխվում են կյանքի պայմանները, բան փոխվում են մարդկանց հոգեբանությունն ու միաժամկետ բռնությունը, կյանքի բարոյական չափորոշիչները, որոնք և են իրական երաշխիքները առաջընթացի և հույսը՝ գալիքի: Թուրքիայի համար նոյնպես Հայոց ցեղասպանության ճանաչումը պիտի

դառնար մարդկային իրավանց և ժողովրդավարության իրական նվաճում, առանց որի թուրքիան պիտի դժվարան կառուցել ազար, արժանապարիվ ու երջանիկ կյանք:

Միքայիլներ, բոլոր ժամանակների գերազույն ձգրումն ու նպարակը, գերազույն ջանքը պիտի լինի, որպեսզի հայրանակող մնան մարդասիրությունը, իրավունքն ու արդարությունը՝ ընդդեմ արելության ու թշնամության, ահարեկչության ու պարերազմի և այլ չարիքների, որոնք դեղ ունեն արդի մեր իրականության մեջ, դարձի մարդասիրավերներն են մարդկության առջև ծառացած:

Միջազգային ներկայացուցչական այս համաժողովը նույնպես կոչված է մեր ժամանակի մարդասիրավերներին անդադանալու: Հայոց ցեղասպանության 90-ամյակի հիշարքակումը սույն առիթ չէ, այլ նաև՝ հրամայական՝ այս առումով: Մեր մաղթանքն է, որ համաժողովը իր նպաստը բերի ավելի լավ, ավելի բարեզզործ աշխարհ ունենալու մարդկության հույսների ու ձգրումների մարմնավորման գործընթացներում:

Մեր գնահատանքն ենք բերում հավաքի կազմակերպիչներին և Զեզ բոլորի և ամենայն հաջողություններ մաղթում համաժողովի աշխարհանքներին:

Թող Տերը օրինի մեզ և օրինի խաղաղության ու արդարության ու ազգերի միջև նորայի ուժանապարհները:

Աղոթք և օրինություն մեկ ու կես միլիոն անմեղ զոհերի հիշարքակին:

Ասքծո ողորմությունը, շնորհն ու սերը թող լինի աշխարհի և մեզ հետ: Ամեն: